պիտույքներ, հանդերձներ, կոշիկներ, պղպեղ (տաքդեղն է), թուղթ, նաև ոչխարի կաթ էր տալիս վանքերին պանիր գցելու և գինի, ինչ խնդրում էին, չէր խնայում: Նաև աղքատասեր էր ու ողորմասիրտ: Համեստության համար բոլորը սիրում էին նրան, նրա խոսքերը բոլորի կողմից ընդունվում էին, որովհետև այոն այո էր, ոչը՝ ոչ: Մեծամեծների առջև հարգված էր ու պատվական: Իսկ Նահապետ կաթողիկոսը դեպի նա ավելի սեր էր տածում, ինչ որ Այվազը ասում էր, նա ասածը սիրով ընդունում էր ու չէր երկյուղում: Այսպես զարդարված էր հոգով ու մարմնով, ամեն բարեձևությամբ:

Այս ամենի վրա ավելացրեց նաև մի մեծ բարություն՝ գյուղում շինեց մեծ եկեղեցի՝ հոյակապ կոփված քարերով, չորս սյուներով, գեղեցիկ գմբեթով: Բազմացրեց անոթներն ու զգեստները, շուրջանակի պարսպեց (եկեղեցին) ապառաժ քարերով: Նաև Որդիկ գյուղից փողրակներով ու կավե խողովակներով մինչև եկեղեցու դուռը ջուր բերեց, որպեսզի ձմռանը գյուղից ջուրը չպակասի: Այս ամեն բարի գործերը կատարելուց հետո, մտածեց նաև մի բարի խորհուրդ՝ առավ մեծ գանձեր, իբրև Սուրբ Երուսաղեմի բաժին և հազար հարյուր քառասունմեկ (1692) թվին գնաց (Երուսաղեմ), որին տեր Աստված թող ուղեկից լինի, որպեսզի խաղաղությամբ գնա, բարով վերադառնա: Իսկ տեր Աստված թող նրան անսայթաք պահի, քանի ողջ է: Եվ այս կյանքից հետո արժանանա երկնքի արքայության, երանական ձայնին և անթառամ պսակին, ամեն: Եվ նրա տունը այնպիսի բարեկարգ վիճակով մնում է, ինչպես գրեցինք:

ԳԼՈՒԽ ԿԴ
ԻՇԽԱՆՆԵՐ ՁԱԼԻՑ ՀԵՏՈ

Ձալ խանից հետո պարսից թագավոր Շահ Հուսեինը Երևան ուղարկեց Մուրթուզաղուլի խան անունով մեկին նստելու տեղապահ, որ էր Նախիջևանի Մահմադ աղա խանի որդին: Սա եկավ նստեց Երևանում մեծ հույսով՝ աչք ունենալով մնալ այստեղ և լինել ավագ իշխան, ուստի թեթևացնում էր երկրի վիճակը. թեթևացրեց նաև հարկը: Թագավորին միշտ աղերսագիր էր առաքում և արքունի մեծամեծներին կաշառք՝ թերևս կամենան Երևանը իրեն տալ: Բայց

այն չեղավ, ինչ կամենում էր, ուստի կամեցավ մի հնարքով երկիրը կողոպտել և ինչ որ պատճառ գտավ՝ թե թագավորից հրաման կա, որ Երևանի երկրում գինի չերևա: Մարդիկ ուղարկեց բոլոր գավառները, որ կնքեն բոլոր կարասներն ու հորերը:

Ելան շրջեցին և կնքեցին բոլոր կարասներն ու հորերը: Նաև գնացին լեռնային գավառները, որտեղ բնավ գինի չի գտնվում, կնքեցին մածնի ու թանի պուտուկները: Այսպես տառապանքի ենթարկեց երկիրը, մինչև որ հավաքվեցին գավառապետերն ու տանուտերերը և մեծ գումարների մուրհակներ գրեցին և տվին նրան, գինու համար հրաման ստացան: Գավառապետերը գրեցին գյուղերին և դրամը հավաքեցին տվին նրան:

Ապա եկան պուտուկներն ու կարասները կնքողները: Սրանք էլ կաշառք առան, ապա քանդեցին կնիքները: Երկու և կես տարի սա մնաց, ապա թագավորը արքունական ծառաներից Մահմադղուլի անունով մեկին ուղարկեց, որ եկավ նստեց իբրև իշխան Երևան քաղաքում: Սա առաջ Երևանում ոստիկան էր արքունական հարկերի վրա, որին իրենք շահմալի են անվանում: Սա գիտեր երկրի բոլոր նեղություններն ու տառապանքները, ստույգ կողոպուտն ու հարկերի շատությունը: Ուստի ամենքի նկատմամբ բարություն ցուցաբերեց, ուղղեց և սեր արտահայտեց ռամիկ հարկատուների նկատմամբ: Բազմաթիվ տեղերում թեթևացրեց հարկերը, ճանապարհների առձեռն մաքսերը, վերացրեց բոլոր գողերին ու ավազակներին, հրամայեց նաև եկեղեցիներ շինել: Դատարանում ճշմարտասեր էր, (աշխատում էր) առանց կաշառքների: Հարկահաններ չէր ուղարկում երկիրը, որպեսզի ռամիկներին չնեղեն, այլ իրենք հավաքեն և քիչ-քիչ հատուցեն: Այսպես լավ մնաց, որքան որ Երևանում էր:

Ապա արքունիքից հրաման եկավ՝ գնալ պատերազմ վրաց Գորգի խանի դեմ: Այնտեղ մի տարի մնաց, ապա վերադարձավ Երևան և նույն բարությամբ մնում էր: Ապա թագավորը հրավիրակ ուղարկեց, նրան տարավ նշանակեց զորագլուխ, որին իրենք կոչում են թվանքչիբաշի: Մնաց երեք տարի ու կես: Վայ նրան, որ չմնաց այնպիսի բարի մարդ: Նրանից հետո թագավորի կողմից առաքվեց իբրև Երևանի իշխան Ֆարզալի (անունով) մեկին, որ Ամիրգունա խանի թոռներից էր. սա մի ագահ ու կծծի մարդ էր՝ կո-